

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԿՈՄԻՏԱՍ 150

ԷՆ ՉՔՆԱՂ ԵՐԿՐԻ ԿԱՐՈՏԻ ԿԱՆՉՈՎ...



Միջին ընթերցող, շարունակվում են Ամենայն հայոց երկու հսկաների Հովհաննես Թումանյանի և մեծն Կոմիտասի 150-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները Հայաստանում, Արցախում և Մփյուռքում:

Տարին թումանյանական է հայտարարված նաև մեզ մոտ Դոնի Ռոստովի հայ համայնքում: Այն հատկապես մեծ ոգևորությամբ են նշում հայոց լեզվի կիրակնօրյա դպրոցների սաներն ու մանկավարժները: Խոսքն այս անգամ հայոց լեզվի ուսուցչուհի, լրագրող ԱՐՄԻՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ մասին է:

Վայոց Ձորի գեղատեսիլ Ջերմուկ քաղաքում է ծնվել հայի գեղեցիկ աչքերով, համեստ ու խելացի այս հայուհին: Ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտը և ճակատագրի բերումով տեղափոխվել է Դոնի Ռոստով: Սկիզբը շատ դժվար էր... տուն, փաստաթուղթ, աշխատանք... Մակայն աշխատասեր ու բարի Արմինեն շուտով նկատեցին համայնքի ղեկավարները և առաջարկեցին հայոց լեզու դասավանդել կիրակնօրյա դպրոցում: Սկսվեց տևական մարտնչական ու ինքնահաստատման ժամանակաշրջանը:

հավաքագրել երեխաներին, խոսել ծնողների հետ, ձեռք բերել ծրագրեր ու դասագրքեր և այլն, և այլն...

– Ամենաերջանիկ օրն այն էր, երբ այստեղ ծնված լրիվ ռուսախոս հայ մանուկները սկսեցին թողնելով կարդալ ու գրել հայերեն տառերը, – հիշում է Արմինեն: Այդ օրից տարիներ են անցել: Արմինեն շարունակում է իր ծրագրերն ու հայրենասեր աշխատանքը: Նա նաև համայնքի «Դոնի Նախիջևան» թերթում պարբերաբար տպագրում է մայրենիին նվիրված հոդվածներ ու ակնարկներ: 2016-ին նա արժանացել է Մփյուռքի նախարարության սահմանած «Մայրենիի պաշտպան» մեդալին, բազմաթիվ շնորհակալագրերի ու դիպլոմների: Այսօր էլ շատ-շատ երեխաներ են գալիս Արմինե Քաջիկովայի մոտ հաղորդակցվելու մեր ոսկեդենիկ լեզվի գանձերին, սովորում Կոմիտասի ու Թումանյանի լեզվով խոսել...

Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ, չեմոլից անթիվ ձեռքերով, – Ձա ն, հայրենի անտառներ, Դուք եք կանչում ինձ ձեռքով:

Փոքրիկ Արտաշեսի, Թամարայի, Գևորգի, Ալբերտի, Լիլիթի և մյուսների գեղեցիկ ասմունքով սկսվեց թումանյանական ցերեկույթը համայնքի դահլիճում: Մասնակցում էին հայ համայնքի կիրակնօրյա դպրոցի սաները և թիվ 61 դպրոցի «Արևիկ» խմբակի աշակերտները, ծնողներ, հյուրեր և համայնքի վաստակաշատ մանկավարժներ Շողիկ Միսավոյանը և Աննա Բեգլարյանը: Ներկաները նախ հաճելի հնարավորություն ունեցան օնլայն շրջելու երկու մեծերի թանգարաններում: Նման հնարավորությունը ստեղծել էր Հայկական վիրտուալ համայնքարանի Հայաստանի գրասենյակը աշխատակիցներ Արմինե Թավաքալյանի և Մարինա Խաչատրյանի մասնակցությամբ:

Ա՛յ ինչ լավ են սարի վրա Անցնում օրերն անո՛ւ 12-անո՛ւ 12, Անըջային, թեթևասահ Անկ ու հովերն անո՛ւ 12-անո՛ւ 12...

Հայ երգի ու պոեզիայի երկու մեծերին՝ Կոմիտասին ու Թումանյանին նվիրված միջոցառումները դեռ կշարունակվեն տարվա ընթացքում, և յուրաքանչյուր այսպիսի բաց դաս կամ ցերեկույթ, կդառնա այն ցանկալի օրը, երբ մարդ իրեն երջանիկ է գգում իմաստավորված տեսնելով իր գործն ու ապրած կյանքը: – Շատ կցանկանայի, – ասում է Արմինեն, – իմ հայ ազգին ու մարդկությանը բնդհանրապես դիմել մեծն Թումանյանի երազանք-պատգամով:



Լինե՛ր հեռու մի անկյուն, Լինե՛ր մանկան արդար քուն, Երագի մեջ երջանիկ, Հաշտ ու խաղաղ մարդկություն...

Ցերեկույթը վերածվեց երգի, պարի, ասմունքի, փոքրիկ ներկայացուցիչների վիրտուալ գրասենյակի մի հրաշալի ժամանակ: Թումանյանի անցավ սահուն ու աննկատ, ինչպես Թումանյանի հայտնի երգում:

Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐԳԻ ՈՒ ՊՈՆԵՉԻԱՅԻ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ԶԱԼԹՐՈՒՄ

Փետրվարի 26-ին Մյասնիկյանի շրջանի Չալթր գյուղի թիվ 1 դպրոցը կրկին իր հյուրընկալ դռներն էր բացել շրջանի թիվ 8, 12, 14, 13 դպրոցների հայերենի ուսուցիչների և աշակերտների արջև: Դպրոցի տնօրեն Ա.Գ. Խասպեկյանը համեստ և բարեհամբույր տիկինը, ջերմ ժպիտով բոլոր հյուրերին ուղեկցեց դպրոցի փոքրիկ դահլիճը: Միասնական միջոցառումը նվիրված էր Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի 150-ամյակին: Դահլիճում տրամադրվել էր թումանյանական եր, իսկ

անում, ու օրհնելով մեզ ասում՝ «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք...»: Անչափ յուրահաստուկ հնչեղություն ունեցավ Թումանյանի «Մուտասանը» հեքիաթի բեմականացումը Չալթրի բարբառով, իսկ «Անուշ»-ի գրական-գեղարվեստական կոմպոզիցիան մեզ մի պահ տարավ մեր նահապետական գյուղը իր հրաշք կյուրիտով և անզուգական երգերով: Այնքան տարված էինք, որ կարծես թևածել էինք մեր գողտրիկ Հայաստանը, մեր լեռների գիրկը, ուր լսվում էր սառնորակ աղբյուրների,



հուզմունքը՝ կոմիտասյան: Ակամայից մեծ երջանկություն են ապրում, երբ մանուկների շուրթերից լսում են Ամենայն հայոց բանաստեղծի ստեղծագործությունները «Չարի վերջը», «Մի կաթիլ մեղրը», «Արծիվն ու կաղնին», «Թմկաբերդի առումը»: Հայոց լեզվի ուսուցիչներ Հ. Վարդանյանի, Ռ. Դուրբայանի, Ա. Հարությունյանի, Ա. Ղամբարյանի, Լ. Պողիկյանի սաները, լավ նախապատրաստված, գեղեցիկ ասմունքով հուզեցին բոլորին: Իսկ դուրսուկի նվազի տակ թևածած Կոմիտասի «Օրհնակի ծառը», «Կե յամանը», «Մարերի հովին մեռնեն» երգերը մեզ մեկ անգամ ևս հիշեցրեցին մեր տխուր անցյալի մասին ու մենք մտովի տեղափոխվեցինք մեր պատմական հայրենիքը, վերապրեցինք մեծն Կոմիտասի ռդերգական ճակատագիրը: «Հին օրհնություն» բանաստեղծությունը մեզ ուղեկցեց մեր մանկության քաղցր հիշողությունների գիրկը, ուր մեր պապերը, վիթխարի ընկուզենիների տակ անած, քեֆ էին

գուլալ ջրերի կարկաչը: Չգարմանաք, այո, Թումանյանի ստեղծագործություններն, իրոք, կախարդական մեծ ուժ ունեն: Այլապես ինչպե՛ս կբացատրեք հայրենիք չտեսած մանկան աչքերում հայրենասիրություն էր առկայծում: Երևի այն է պատճառը, որ այդ զգացմունքը երեխաների երակներում է, նրանց արյան մեջ, նրանց հոգում, իսկ մեզ պարզապես պետք է միշտ վառ պահել այն: Շնորհիվ մեր հանձարների, հանձինս Թումանյանի, մեր ոսկեդենիկ մայրենին պետք է հնչի յուրաքանչյուր հայի շուրթերից: Կրկին ու կրկին համոզվեցինք, որ հայր, որտեղ էլ ապրի, միևնույն է, նա պիտի խոսի, խնդա ու լա հայերեն, երկնի ու արարի հայերեն... Միջոցառման ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկավ մեթոդ-խորհրդի նախագահ Հ. Քաղիկյանը: Անահիտ ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ՎՅԱՆ Հայոց լեզվի ուսուցչուհի

ԼՈՒՅՄ Է ՏԵՄԵԼ


ՈՐՊԵՍ ՊԱՏՉԱՄ՝ ՀԱՅՈՑ ԼԵԳՈՒՆ

Ռուսաստանում բնակվող սիրելի ընթերցողներ, ուսուցիչ, ծնող, մայր, եթե դուք շահագրգռված եք ձեր երեխաների, ու սաների հայերենի կրթությամբ առաջարկում ենք ձեռք բերել վաստակաշատ անկախարժ, մի շարք ուսումնական ձեռնարկների և դասագրքերի հեղինակ ԿԱՐՄԻՆԵ ԵՄՍՅԱՆԻ «ՆԱՐԱՄԱՏՅԱՆՎԱՅ ԱՅԲԵՆԱՐԱՆ»: Դասագրքի մասին ավելի հանգամանորեն ներկայացնում է ինքը հեղինակը:



Ձեր ուշադրության ենք ներկայացնում ձեռնարկ Ռուսաստանում ապրող հայ երեխաների, ինչպես նաև նրանց համար, ովքեր ցանկանում են սովորել հայերեն տառերը, խոսել հայերեն, հաղորդակցվել հայ ժողովրդի անցյալին և ներկային, այսինքն իմանալ հայ ժողովրդի

բարձր դասարանի երեխաների, ինչպես նաև ծնողների համար: Դասագիրքը սկսվում է պայմանական նշանների ուսուցումով: Բացի տառուսուցումից, դասագրքում տեղ են գտել այլ թեմաներ: – բանավոր խոսքի գարգացում (կենդանական ու բուսական աշխարհ, կենցաղային իրեր, ընդհանուր խոսակցական բառեր, գրույցներ և այլն) – խաչբառեր, վարժություններ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, առանձին նախադասություններ, երկխոսություններ – քերականական տեղեկություններ – ընդհանուր տեղեկություններ հայ ժողովրդի փառավոր անցյալի և ներկայի մասին – արվեստի ու մշակույթի նշանավոր գործիչների մասին տեղեկություններ – հայ առաջնակարգ գրողների և բանաստեղծների գործերից Մյա ամենն ավելի հետաքրքիր և դյուրին է դարձնում ուսուցումը: Բացի հայոց լեզվի ուսուցումից դասագրքի հիմնական նպատակն է երեխայի մեջ սերմանել սեր դեպի իր պատմական հայրենիքը Հայաստանը, նրա լեզուն, մշակույթը: Չէ որ Հայաստանն է մեր հույսն ու հավատը, մեր ապավենն ու թիկունքը, մեր սերն ու կարողը: Ուսումնական ձեռնարկը ձեռք բերելու համար կարող եք գանգահարել հետևյալ հեռ. +7 (918) 336-96-83:



պատմությունը, կենցաղը և մշակույթը: Երկար տարիներ աշխատելով Ռուսաստանում համոզվել եմ, որ այսօր չունենք այնպիսի դասագիրք, որը կարող է գոհացնել Ռուսաստանում ապրող հայ երեխային: Օգտվել ենք Հայաստանի շնորհաշատ հեղինակների դասագրքերից, բայց դրանք հայերեն խոսող, Հայաստանը իմացող, հայեցի մտածող երեխաների համար է: Մույն ձեռնարկը տարրական և միջին դասարանի երեխաների համար է: Ձեռնարկը մատչելի է նաև